

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՆՈՐԻԿԻ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑ ԱՐԴԻ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.01-«Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ս.Տ.Վարդույան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Լ.Թ.Ասատրյան

Մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ա.Գ.Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝

Գյումրու Մ.Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական
ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ. մայիսի 8-ին ժամը 14:00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք.Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. ապրիլի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝



Ա.Հ.Սվազյան

ԱՏԵՆԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ:

Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասսիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ:

Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռք բերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում:

Վերը նշված կարևորագույն խնդիրների լուծման նպատակով ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվում են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ: Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սովորողների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող քննադատական մտածողության տեխնոլոգիան: Այն առավել հայտնի է «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի շրջանակներում: Քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման հիմնախնդիրները դիտարկել են 20-րդ դարի վերջերին ԱՄՆ-ի հոգեբան-մանկավարժներ Զ.Լ.Սթիլը, Բ.Ս.Մերեդիթը, Չ.Թեմփլը, ինչպես նաև Բ.Բլումը, Դ.Հալպերը, Դ.Քլուսթերը և ուրիշներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման խնդիրներին ու արդյունավետությանը ավելի ուշ անդրադարձել են ժամանակակից մանկավարժներ Գ.Սելեվկոն, Ի.Զագաչևը,

Ս.Զաիր-Բեկը, Ի.Մուշտավինսկայան, Մ.Կլարինը, Վ.Կուկուշինը, Վ.Միժերիկովը և այլք:

Քննադատական մտածողության տեխնոլոգիան՝ որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորման ու զարգացման միջոց դեռևս չի ենթարկվել ամբողջական գիտամանկավարժական ուսումնասիրման ու վերլուծության:

Քննադատական մտածողության տեխնոլոգիան, լինելով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա, ունի բավականին հին արմատներ: Այն միավորել ու իր մեջ է ամփոփել մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների /պրոբլեմային ուսուցման, կոլեկտիվ ուսուցման, խաղային ուսուցման տեխնոլոգիաների/ արդյունավետ, արդիական ու նշանակալի կողմերը՝ դառնալով առավել ընդգրկուն ու ժամանակի պահանջներին համահունչ:

Ատենախոսության շրջանակներում քննադատական մտածողության տեխնոլոգիան ուսումնասիրվել է կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման տեսանկյունից՝ ապահովելով նպաստավոր մանկավարժական պայմաններ սովորողների բնականոն զարգացման համար: Քննադատական մտածողության տեխնոլոգիան դիտարկվել է նաև որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, քանի որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս սովորողներին լինել ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից:

Տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը կրում է որոշակի փոփոխություններ, շատ մեթոդներ վերափոխվում են՝ համապատասխանեցվելով կրտսեր դպրոցականների տարիքային ու անհատական առանձնահատկություններին:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունների բացահայտումն ու հիմնավորումն է՝ որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ տարրական դպրոցի ուսուցման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող քննադատական մտածողության տեխնոլոգիան է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ: Կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանն ուղղված քննադատական մտածողության տեխնոլոգիան կլինի կիրառելի և արդյունավետ, եթե.

- վեր հանվեն քննադատական մտածողության տեխնոլոգիայի գիտամանկավարժական հիմքերը՝ տարրական դպրոցում կիրառելու համատեքստում,

- բացահայտվեն տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությանը նպաստող հիմնական պայմանները,
 - քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը ժամանակակից տարրական դպրոցում համապատասխանեցվի և հարմարեցվի կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկություններին:
- ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝**
- Դիտարկել սովորողների ճանաչողական կարողությունների զարգացման դերն ու անհրաժեշտությունը տարրական դպրոցում:
 - Ուսումնասիրել քննադատական մտածողության տեխնոլոգիայի գիտատեսական, մեթոդաբանական հիմքերը և հիմնավորել տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման գործում:
 - Հիմնավորել քննադատական մտածողության տեխնոլոգիան՝ որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, որը նպաստում է կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանը:
 - Գիտափորձով հավաստել, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան արդի տարրական դպրոցում արդյունավետ կիրառվող և կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանը նպաստող ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա է և սահմանել դրա կիրառության արդյունավետ մանկավարժական պայմանները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՄՔԸ:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել մանկավարժության ավանդական և նորարարական մոտեցումներն ու տեսությունները /Յ.Կոմենսկի, Կ.Բաբանսկի, Ն.Կովալյով, Ս.Բարանով, Մ.Սկատկին, Ի.Պոլլասի, Պ.Պիդկասիստի, Մ.Կլարին և այլք/, կրտսեր դպրոցական տարիքի վերաբերյալ մանկավարժական և հոգեբանական գաղափարներն ու մոտեցումները /Ա.Պետրովսկի, Վ.Կրուտցկի, Լ.Վիգոտսկի և այլք/:

Հետազոտության հիմքում դրված են ճանաչողության վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական, մանկավարժական գաղափարներն ու մոտեցումները /Մ.Ռոզենտալ, Ի.Ֆրոյդ, Վ.Ռատնիկով, Վ.Կանկե, Ն.Տալիգինա, Գ.Շչուկինա, Ա.Կաիրով, Վ.Կուզնեցով, Վ.Սլաստյոնին և այլք/, ինչպես նաև ճանաչողական կարողությունների ձևավորման ու զարգացման վերաբերյալ տեսությունները /Լ.Վիգոտսկի, Բ.Բլում, Ժ.Պիաժե, Լ.Ջանկով, Դ.Էլկոնին, Վ.Դավիդով/:

Հետազոտության համար հիմք են ընդունվել նաև մանկավարժական գործընթացում տարբեր տեխնոլոգիաների կիրառման վերաբերյալ գիտական մոտեցումներն ու ուսումնասիրությունները /Ն.Մորևա, Ա.Կոլեչենկո, Ս.Սմիրնով, Ն.Շչուրկովա, Գ.Սելեվկո, Վ.Կուկուշին, Ե.Ռապացկիչ, Ս.Մուխինա, Հ.Պետրոսյան և այլք/, ինչպես նաև ակտիվ ուսուցման կազմակերպման վերաբերյալ տարբեր

մանկավարժների զաղափարներն ու մոտեցումները /Վ.Գուզեն, Տ.Սալնիկովա, Գ.Կոդժասպիրովա, Ե.Պոլատ, Մ.Գուլյովա և այլք/:

Հետազոտության համար հիմք են հանդիսացել քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման վերաբերյալ մի շարք մանկավարժների մոտեցումներն ու ուսումնասիրությունները /Զ.Սթիլ, Բ.Մերեդիթ, Չ.Թենկլի, Դ.Քլուսթեր, Ի.Չազաշև, Ս.Չախիր-Բեկ, Ի.Մուշտալինսկայա, Գ.Սելեվկո, Վ.Միժերիկով և այլք/:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու ընթացքում կիրառվել են հետևյալ գիտահետազոտական մեթոդները.

- վերլուծվել և ընդհանրացվել են մանկավարժական առաջավոր փորձի վերաբերյալ աշխատությունները,
- իրականացվել են գրույցի, դիտման մեթոդները,
- ուսումնասիրվել են սովորողների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքները,
- ուսումնասիրվել են դպրոցական փաստաթղթերը,
- անցկացվել է մանկավարժական գիտափորձի մեթոդը,
- կիրառվել են հետազոտությունների արդյունքների վերլուծման մաթեմատիկական մեթոդները /արձանագրում, սանդղակի կազմում/:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:

- Քննադատական մտածողության տեխնոլոգիան դիտարկվել է որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանն ուղղված արդյունավետ մանկավարժական տեխնոլոգիա:
- Քննադատական մտածողության տեխնոլոգիան ներկայացվել է որպես տարրական դպրոցում կիրառելի ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա:
- Սահմանվել են մանկավարժական այն պայմանները, որոնք արդյունավետ են դարձնում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը տարրական դպրոցում:
- Քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդները համապատասխանեցվել են կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններին և խմբավորվել են ըստ ՀՀ Հանրակրթության պետական չափորոշիչ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ այն է, որ աշխատանքում տեսական վերլուծության է ենթարկվել «կրթություն», «ճանաչողություն» հասկացությունների զարգացման պատմությունը: Տեսական վերլուծության է ենթարկվել քննադատական մտածողության տեխնոլոգիան՝ որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, որը նպաստում է սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Մշակված դրույթներն օգտակար կլինեն մանկավարժական տեխնոլոգիաների տեսական վերլուծություններ կատարողների համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ այն է, որ կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններին համապատասխանեցված քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդները կարող են կիրառվել տարրական դպրոցի ուսուցիչների կողմից՝ նպաստելով կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, ուսուցման գործընթացի ակտիվացմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Աշխատանքի արդյունքները կարող են կիրառվել մանկավարժության տարբեր ոլորտներում՝ որպես ընտրովի կամ հատուկ դասընթացներ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼ ԴՐՈՒԹՅՆԵՐԸ.

- Մանկավարժության առաջ քաշած խնդիրների շարքում կարևորվում է սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը՝ որպես արդի հասարակական պահանջ:
- Քննադատական մտածողության տեխնոլոգիան, լինելով ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, նպաստում է տարրական դպրոցի ուսուցման գործընթացի արդյունավետությանը, ակտիվացմանը, սովորողների բնականոն զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:
- Ժամանակակից տարրական դպրոցին համապատասխանեցված քննադատական մտածողության տեխնոլոգիան նպաստում է կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿՈՐԿԱԾՈՒԹՅՈՒՆՆ ապահովվում է հետազոտական նյութի վերլուծությամբ, որի համար կիրառվել են հետազոտության նպատակներին համարժեք համալիր մեթոդներ, հետազոտության արդյունքների մաթեմատիկական մշակումներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆ ՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԸ: Տեսական ուսումնասիրությունների արդյունքները գիտափորձով ներդրվել են ՀՀ Երևան քաղաքի Գ.Ստարովոյտովայի անվան թիվ 177 և Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի թիվ 2 դպրոցներում:

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքները քննարկվել են ներբուհական, միջբուհական և միջազգային մասնագիտական գիտաժողովներում, միաժամանակ տպագրվել են ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլող հոդվածներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ: Հետազոտությունն իրականացվել է մի քանի փուլով՝

- 2002-2006թթ.՝ անհրաժեշտ գիտամանկավարժական գրականության, պարբերական մամուլի, համացանցային նյութերի ուսումնասիրություն,
- 2006-2009թթ.՝ կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերլուծություն,
- 2009-2010թթ.՝ ՀՀ տարբեր դպրոցներում ատենախոսության շրջանակներում փորձարարական աշխատանքների իրականացում,
- 2010-2011թթ.՝ տարբեր ուսումնասիրությունների արդյունքների, կատարված փորձարարական աշխատանքների, ներդրված գիտափորձի վերլուծության և ընդհանրացման հիման վրա աշխատանքի ամբողջական շարադրում:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածներից: Ընդհանուր ծավալն է 160 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Պաշտպանությանը ներկայացվող ատենախոսության **ներածության** մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, բացահայտվել են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, մեկնաբանվել են հետազոտության տեսական և գործնական նշանակությունները, ձևակերպվել է հետազոտության գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, ուսումնասիրության մեթոդները, փորձարարական հիմքերը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության **«Սովորողների ճանաչողական կարողությունների զարգացումը՝ որպես արդի հասարակական պահանջ և մանկավարժական խնդիր»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:

«Կրթության նպատակի և խնդիրների ձևավորումը՝ որպես հասարակական պատվերի հրամայական» խորագրով առաջին ենթագլխում մանրամասն ներկայացվել և վերլուծվել են «կրթություն» հասկացության տարբեր սահմանումներ ու ձևակերպումներ, որոնց վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ հասարակական-պատմական տարբեր ժամանակաշրջաններում կրթության ռազմավարությունը համապատասխանեցվել է տվյալ հասարակության պահանջներին՝ հենվելով գիտական նվաճումների և մարդկության փորձի արդյունքների վրա:

Այսօր ժամանակակից հասարակությանը պետք է այնպիսի կրթություն, որը հասարակության յուրաքանչյուր անդամին հնարավորություն կտա զարգացող ու փոփոխվող աշխարհում քայլել այդ փոփոխություններին համընթաց՝ անընդհատ

զարգացնել մտավոր կարողությունները, լինել նախաձեռնող ու ստեղծագործական մոտեցում ցուցաբերել կյանքի տարբեր բնագավառներում:

«Կրթական բարեփոխումները՝ որպես արդի կրթական հիմնախնդիրների լուծմանն ուղղված գործընթաց» խորագրով երկրորդ ենթազլխում քննարկվում է կրթական բարեփոխումների կարևոր խնդիրը: Մանկավարժության նկատմամբ նոր պահանջները, ինչպես նաև սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում տեղի ունեցող էական փոփոխությունները, գիտության ու տեխնիկայի մեծ արագությամբ ընթացող առաջընթացը, տեղեկատվության կուտակումը հանգեցրին կրթության համակարգի արդիականացման, նորարարական գործունեության և կրթական բարեփոխումների իրականացման անհրաժեշտության:

Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տարրական դպրոցում ուսուցման գործընթացը արդյունավետ, արդիական, աշակերտակենտրոն, սովորողների համար մատչելի ու գրավիչ, հաճելի ու հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է վերանայել դասավանդվող առարկաները, ուսումնական ծրագրերը, ուսուցման կիրառվող մեթոդներն ու միջոցները և ժամանակակից ուսուցման գործընթացում նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման նպատակն ու անհրաժեշտությունը:

«Կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորման ու զարգացման հիմնախնդիրը արդի ուսուցման գործընթացում» խորագրով երրորդ ենթազլխում վերլուծվել է ժամանակակից կրթության կարևոր խնդիրներից մեկը՝ սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Ճանաչողության հիմնախնդիրը բավականին ծավալուն քննարկվում է փիլիսոփայական գրականության մեջ: Ճանաչողության խնդրի պարզաբանմանը, սովորողների ճանաչողական ակտիվությանը, ճանաչողական կարողությունների, հետաքրքրությունների ձևավորմանն ու զարգացմանը անդրադարձել են նաև բազմաթիվ մանկավարժներ: Ճանաչողությունն ակտիվ գործընթաց է, այն ուսումնասիրվում է ուսուցման գործընթացի հետ փոխկապվածության մեջ և անմիջականորեն կապված է պրակտիկայի հետ:

Ժամանակակից մանկավարժահոգեբանական հետազոտությունները /Լ.Զանկով, Դ.Էլկոնին, Վ.Դավիդով, Ժ.Պիասե և այլք/ վկայում են, որ առավել նպատակահարմար է երեխաների ճանաչողական հետաքրքրությունների, ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը սկսել վաղ տարիքից: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է որոնել, մշակել և ներդնել կրտսեր դպրոցականների ճանաչողական ակտիվության, ճանաչողական հետաքրքրության ու ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը միտված նոր մոտեցումներ ու գաղափարներ, քանի որ դա տարրական դպրոցում ուսուցման գործընթացի հաջողության, արդյունավետության գլխավոր պայմաններից մեկն է:

Ատենախոսության «Քննադատական մտածողության տեխնոլոգիան» որպես արդի տարրական դպրոցի մանկավարժական խնդիրների լուծմանն ուղղված

մանկավարժական տեխնոլոգիա» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

«Ուսուցման գործընթացի ակտիվացմանն ուղղված մանկավարժական տեխնոլոգիաները՝ որպես ժամանակակից տարրական դպրոցի մանկավարժական խնդիրների լուծման միջոց» խորագիրը կրող առաջին ենթագլխում կարևորվել է ակտիվ ուսուցման դերը սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորման ու զարգացման հարցում: Ուսուցման գործընթացում սովորողների ակտիվ մասնակցությամբ, ուսման դրական դրդապատճառների շնորհիվ դրսևորվում են ճանաչողական հետաքրքրություններ, ուսումնական նյութի նպատակաուղղված ակտիվ ընկալում, իմաստավորում ու առավել խորությամբ յուրացում:

Այս ենթագլխում ներկայացվել են ուսուցման գործընթացի ակտիվացմանն ուղղված մանկավարժական մի շարք տեխնոլոգիաներ՝ մասնավորապես պորբլեմային ուսուցման, կոլեկտիվ ուսուցման և խաղային ուսուցման տեխնոլոգիաները, որոնք համեմատական վերլուծության են ենթարկվել քննադատական մտածողության տեխնոլոգիայի հետ: Համեմատության արդյունքում վեր են հանվել նշված տեխնոլոգիաների կապը, ընդհանրական և բնորոշ գծերն ու առանձնահատկությունները: Քննադատական մտածողության տեխնոլոգիան միավորել ու իր մեջ է ամփոփել վերը նշված մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետ, արդիական ու նշանակալի կողմերը՝ դառնալով առավել ընդգրկուն ու ժամանակի պահանջներին համահունչ:

Քննադատական մտածողության տեխնոլոգիան դիտարկվել է որպես տարրական դպրոցում կիրառելի ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, քանի որ այն ուղղված է սովորողների պասսիվ վերարտադրողի դերը ակտիվ մասնակցի դերով փոխարինելուն, սովորողների բնականոն զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն, երեխաների տարիքային ու անհատական առանձնահատկություններին համապատասխան պայմաններ, աշխատանքի տեմպ ու կազմակերպման ձև ապահովելուն:

«Քննադատական մտածողության տեխնոլոգիան՝ որպես տարրական դպրոցում սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանն ուղղված մանկավարժական տեխնոլոգիա» խորագրով երկրորդ ենթագլխում բազմակողմանի վերլուծության է ենթարկվել քննադատական մտածողության տեխնոլոգիան:

Քննադատական մտածողության զարգացման խնդրին առավել մանրամասն անդրադարձել են 20-րդ դարի վերջերին, թեև այն ունի բավականին հին արմատներ: ԱՄՆ-ի ժամանակակից հոգեբան-մանկավարժներ Ջ.Լ.Սթիլի, Ք.Ս.Մերեդիթի, Չ.Թեմփլի կողմից մշակվել են մանկավարժական ուղեցույց-ձեռնարկներ՝ ուղղված սովորողների քննադատական մտածողության զարգացմանը՝ կարդալու և գրելու միջոցով:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հստակ սահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում և կշռադատում /ԽԻԿ համակարգ/: Այս համակարգն ուղղված է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը, որի շնորհիվ խթանվում ու վեր են հանվում սովորողների ունեցած գիտելիքները, իմաստավորվում և կշռադատվում է ուսուցանվող նյութը՝ վերլուծության, համադրության, համեմատությունների ու եզրահանգումների միջոցով: Քննադատական մտածողության տեխնոլոգիան հանդես է գալիս որոշակի մեթոդախմբով, ընդ որում յուրաքանչյուր մեթոդ կիրառվում է ԽԻԿ համակարգի կոնկրետ փուլում՝ ելնելով տվյալ մեթոդի նպատակներից: Օրինակ՝ մտավոր գրոհ մեթոդը կիրառելի է խթանման փուլում, իսկ հինգ բոպեանոց շարադրանքի մեթոդը կամ Վեննի դիագրամ մեթոդը միայն կշռադատման փուլում և այլն:

Աշխատանքում հիմնավորվում է, որ քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդները տարրական դպրոցում կիրառելի են միայն որոշակի փոփոխությունների, պարզեցումների արդյունքում: Ուստի ատենախոսության մեջ ներկայացված մեթոդները համապատասխանեցվել են տարրական դպրոցին, օրինակ՝ մտավոր գրոհ, քառաբաժանում, ինքնագնահատման աղյուսակ /ԳՈԻՍ/, Վեննի դիագրամ, հնգյակ, կանխագուշակումների աղյուսակ, կենսագրական բանաստեղծություն, աքրոստիկոս և այլ մեթոդներ: Յուրաքանչյուրը դիտարկվել է հետևյալ սկզբունքով՝ ինչին է նպաստում, ինչպես է իրականացվում և ինչպես կարող է կիրառվել տարրական դպրոցում: Օրինակ՝ ջիգսո /խճանկար/ մեթոդը առավելապես նպաստում է սովորողների համագործակցային կարողությունների ձևավորմանը: Այն տարրական դպրոցում անհրաժեշտ է կիրառել միայն փոքրածավալ, պարզ և մատչելի բովանդակությամբ նյութի ուսումնասիրման ժամանակ: Աշխատանքային խմբերը պետք է լինեն փոքրաքանակ: Խմբային աշխատանքների ժամանակ կրտսեր դպրոցականներին կարելի է թույլատրել նշումներ անել, որպեսզի չդժվարանան և չհոգնեն:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդները խմբավորվել են նաև հիմք ընդունելով ՀՀ Հանրակրթության պետական չափորոշիչ բաղադրիչները: Այսպես, օրինակ՝

- *գիտելիքների համակարգ* ձևավորող մեթոդներն են՝ մտավոր գրոհ, փոխգործուն նշաններ, խմբավորում և այլն:
- *ճանաչողական կարողություններ և հմտություններ* ձևավորող մեթոդներն են՝ Վեննի դիագրամ, խորանարդում, քառաբաժանում, պրիզմա, մանրապատում /կմախք/ և այլն:
- *հաղորդակցական կարողություններ և հմտություններ* ձևավորող մեթոդներն են՝ հարցադրումներով ուղղորդված ընթերցանություն, «Հաստ» և «բարակ» հարցեր և այլն:

- *համագործակցային կարողություններ և հնտություններ* ձևավորող մեթոդներն են՝ ջիգսո /խճանկար/, շրջանաձև շարադրանք և այլն:
- *ստեղծագործական կարողություններ և հնտություններ* ձևավորող մեթոդներն են՝ հնգյակ, բանալի բառեր, աքրոստիկոս և այլն:
- *ինքնուրույն գործունեության կարողություններ և հնտություններ* ձևավորող մեթոդներն են՝ ինքնագնահատման աղյուսակ /ԳՈՒՍ/, երկու աստղ և մեկ ցանկություն և այլն:
- *արժեքային համակարգ* ձևավորող մեթոդներն են՝ ռուբրիկ, հեղինակի աթոռ մեթոդները:

Իրականացված խմբավորումը պայմանական է, քանի որ քննադատական մտածողության տեխնոլոգիայի որոշ մեթոդներ կարելի է միաժամանակ դիտարկել չափորոշչի մի քանի բաղադրիչների տեսանկյունից: Մեթոդները խմբավորվել են՝ ելնելով դրանց առաջնային նպատակներից:

Ատենախոսության «**Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները տարրական դպրոցի ուսուցման գործընթացում**» խորագրով երրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

«Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորություններն ու առանձնահատկությունները տարրական դպրոցում» խորագիրը կրող առաջին ենթագլխում ներկայացված են կրտսեր դպրոցականների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններից ելնելով՝ քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը տարրական դպրոցում կրում է որոշակի փոփոխություններ՝ պարզեցումներ, շտկումներ և մշակումներ:

Տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը կլինի արդյունավետ մի շարք մանկավարժական պայմանների առկայության դեպքում.

- բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում,
- ուսուցման գործընթացի միջոցների, մեթոդների, ընթացակարգի ճիշտ ընտրություն,
- ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում,
- ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում,
- դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում,
- ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման արդյունավետությունը մեծապես կախված է նաև ուսուցչի վարպետությունից: Տարրական դպրոցի ուսուցիչը պետք է լիարժեք տիրապետի տվյալ տեխնոլոգիային, կարողանա յուրաքանչյուր մեթոդ տեղին ու ժամանակին կիրառել՝

աշխատանքը դարձնելով ոչ միայն արդյունավետ, այլ նաև ամեն մի երեխայի համար հաճելի, ընդունելի ու կարևոր՝ նպաստելով սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանը:

«Տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառմամբ ուսուցման գործընթացի ակտիվացումն ու կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացումը հավաստող գիտափորձ» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացվել են տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառմամբ մանկավարժական գործընթացի ակտիվացումն ու կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացումը հավաստող գիտափորձի ընթացքն ու արդյունքները:

Գիտափորձն իրականացնելու համար ընտրվել են ստուգողական և փորձարարական դասարաններ՝

- Հետազոտվող դասարաններում աշակերտներների թիվն էր՝
- ✓ ՀՀ ք. Երևանի թիվ 177 դպրոցի ստուգողական դասարան՝ 25, փորձարարական դասարան՝ 27 աշակերտ:
- ✓ ՀՀ ք. Ստեփանավանի թիվ 2 դպրոցի ստուգողական դասարան՝ 24, փորձարարական դասարան՝ 23 աշակերտ:
- Աշակերտներն ունեին առաջադիմության ու զարգացման մոտավորապես միևնույն մակարդակը:
- Ստուգողական դասարաններում ուսուցումն իրականացվել է առավելապես ավանդական ուսուցման տեխնոլոգիայով՝ հիմք ընդունելով ուսուցման բացատրական մեթոդը: Փորձարարական դասարաններում ուսուցումն իրականացվել է քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառմամբ:
- Գիտափորձի շրջանակներում հետազոտվող երկու դասարաններում /ստուգողական և փորձարարական/ յուրաքանչյուր առարկայից /մայրենի և մաթեմատիկա/ ընտրվել են դասագրքերի միևնույն թեմաները: Գիտափորձի իրականացման համար կիրառման մեջ են դրվել մեր կողմից նախապես մշակված դասեր:
- Գիտափորձի համար հիմք է ընդունվել ՀՀ Հանրակրթության պետական չափորոշիչը:
- Հետազոտվող դասարաններում մանկավարժական գիտափորձի արդյունքները չափվել են մեր կողմից մշակված հարցաշարերի վերլուծության հիման վրա: Գիտափորձի վերջնական արդյունքները համապատասխանաբար ներկայացվել են աղյուսակներով և գծապատկերներով:

«Երևան քաղաքի թիվ 177 դպրոց [տես աղյուսակ 1]:

Գիտափորձի արդյունքների չափման համեմատական աղյուսակ 1

թիվ 177 դպրոց	Ստուգողական դասարան աշակերտների քանակ /%/			Փորձարարական դասարան աշակերտների քանակ /%/		
	բարձր	միջին	ցածր	բարձր	միջին	ցածր
գիտ. համակարգ	87%	10%	3%	86%	11.5%	2.5%
Ճանաչ. կարող.	71,5%	21,5%	7%	89%	6%	5%
հաղորդ. կարող.	40%	48%	12%	48%	41,5%	10,5%
համագործ. կարող.	3,5%	8,5%	88%	71%	20,5%	8,5%
ստեղծ. կարող.	21,5%	26%	52,5%	60%	30%	10%
ինքն. գործ. կարող.	30%	42,5%	27,5%	54,5%	34%	11,5%
արժեք. համակարգ	47,5%	38,5%	14%	60,5%	30,5%	9%

Պարզելու համար, թե քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն ինչպես է նպաստում սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, գիտափորձի արդյունքներից առանձին դիտարկվել են այդ բաղադրիչի վերլուծությունից ստացված տվյալները [տես գծապատկեր 1]:

Գծապատկեր 1

Ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացման համեմատական վերլուծության գծապատկեր



Լյսափսով, ստացված արդյունքների համեմատական վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը փորձարարական դասարանի բարձր մակարդակի դեպքում արձանագրել է 17,5%-ով բարձր արդյունք, միջին մակարդակի դեպքում՝ 15,5%-ով, իսկ ցածր մակարդակի դեպքում՝ 2%-ով բարձր արդյունք:

«Ստեփանավան քաղաքի թիվ 2 դպրոց [տես աղյուսակ 2]:

Գիտափորձի արդյունքների չափման համեմատական աղյուսակ 2

թիվ 2 դպրոց	Ստուգողական դասարան աշակերտների քանակ /%/ բարձր			Փորձարարական դասարան աշակերտների քանակ /%/ բարձր		
	բարձր	միջին	ցածր	բարձր	միջին	ցածր
գիտ. համակարգ	88,5%	9,5%	2%	90%	8%	2%
ճանաչ. կարող.	64,5%	25%	10,5%	86,5%	9,5%	4%
հաղորդ. կարող.	51%	36%	13%	56%	33%	11%
համագործ. կարող.	9%	15%	76%	65%	13,5%	21,5%
ստեղծ. կարող.	25%	25%	50%	57%	23%	20%
ինքն. գործ. կարող.	28,5%	45,5%	26%	54%	40%	6%
արժեք. համակարգ	56,5%	36,5%	7%	59%	32%	9%

Համանման եղանակով պարզելու համար, թե քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն ինչպես է նպաստում սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, գիտափորձի արդյունքներից առանձին դիտարկվել են այդ բաղադրիչի վերլուծությունից ստացված տվյալները [տես գծապատկեր 2]:

Գծապատկեր 2

Ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացման համեմատական վերլուծության գծապատկեր



Լյսախոսվ, երկրորդ դեպքում ևս ստացված տվյալների համեմատական վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը փորձարարական դասարանի բարձր մակարդակի դեպքում արձանագրել է 22%-ով բարձր արդյունք, միջին մակարդակի դեպքում՝ 15,5%-ով, իսկ ցածր մակարդակի դեպքում՝ 6,5%-ով բարձր արդյունք:

Գիտափորձի արդյունքում կատարված վերլուծություններից պարզ դարձավ,

որ քննադատական մտածողության տեխնոլոգիան տարրական դպրոցում կիրառելի է և արդյունավետ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը մեծապես նպաստում է սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Տարրական դպրոցում այն կիրառելիս առաջանում են որոշակի դժվարություններ՝ կապված կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունների, ուսուցանվող նյութին համապատասխան մեթոդների ընտրության, դրանց ժամանակատար լինելու և ուսուցչի մասնագիտական պատրաստվածության հետ:

Հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա արվել են հետևյալ եզրակացությունները.

1. Հասարակական բուռն զարգացումները, ժամանակակից կրթական բարեփոխումները կյանքի են կոչել նոր՝ տնտեսական, գիտական, մշակութային և այլ պահանջներ, որոնք էլ պայմանավորել են մանկավարժական գործընթացի արմատական փոփոխությունները՝ ուսուցիչ-աշակերտ հարաբերությունների վերանայում, դասավանդման նոր մեթոդների և ձևերի, մանկավարժական նոր տեխնոլոգիաների որոնում և կիրառում և այլն: Ժամանակակից ուսուցման գործընթացում կրթության հիմնախնդիրների շարքում իր կարևոր տեղն ունի սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը, որն այսօր դիտարկվում է որպես հասարակական պահանջ և կրթության արդի խնդիր:
2. Տեսական վերլուծությունների արդյունքում հիմնավորվել է, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան, լինելով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա, ունի բավականին հին արմատներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիան ներառում է մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների՝ մասնավորապես պորբլեմային ուսուցման, կոլեկտիվ ուսուցման և խաղային ուսուցման տեխնոլոգիաների որոշակի տարրեր, խթանում է կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացումը և ուսումնական ակտիվությունը:
3. Տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան կարող է արդյունավետ կերպով կիրառվել ժամանակակից տարրական դպրոցի ուսուցման գործընթացում որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, որը նպաստում է սովորողների ակտիվությանը, ճանաչողական կարողությունների արդյունավետ զարգացմանը:
4. Փորձարարական հետազոտության արդյունքները վկայում են, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան կարող է արդյունավետ

կիրառվել տարրական դպրոցում և նպաստել կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մանկավարժական հետևյալ պայմանների դեպքում.

- բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում,
 - սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում,
 - ուսուցման գործընթացի միջոցների, մեթոդների, ընթացակարգի ճիշտ ընտրություն,
 - ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում,
 - ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում,
 - դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում,
 - ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն:
5. Տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդների ընտրությունն անմիջականորեն պակված է ուսուցանվող նյութի բովանդակության, բարդության և ծավալի հետ: Այս տեխնոլոգիայի շատ մեթոդներ ձկուն են և հեշտությամբ հարմարեցվում ու համապատասխանեցվում են կրտսեր դպրոցականների հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին:
6. Փորձարարական աշխատանքների արդյունքները փաստում են, որ քննադատական մտածողության տեխնոլոգիան նպաստում է ոչ միայն սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, այլ նաև ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչի մյուս բաղադրիչների՝ գիտելիքների համակարգի, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական, ինքնուրույն գործունեության կարողությունների ու հմտությունների և սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ
հրապարակումներում.**

1. Հարությունյան Գ.Ն., «Խաղը որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական հետաքրքրությունների խթանման միջոց», «Նախաշավիղ», /Գիտամեթոդական հանդես/, N4, 2003թ., էջ 3-8:
2. Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության զարգացման մեթոդները տարրական դասարաններում», «Նախաշավիղ», /Գիտամեթոդական հանդես/, N5-6, 2004թ., էջ 4-11:
3. Հարությունյան Գ.Ն., «Ուսուցման արդի նպատակների իրականացումը «Քննադատական մտածողության զարգացման» մեթոդների միջոցով

/տարրական դպրոցի օրինակով/», «Մխիթար Գոշ», /Գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ/ 3[7], 2005թ., էջ 79-82:

4. Հարությունյան Գ.Ն., «Ուսուցումը որպես հասարակական պատվերի բավարարման միջոց», «Մխիթար Գոշ», /Գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ/, 4[8], 2005թ., էջ 117-119:
5. Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները կրտսեր դպրոցում», «Մանկավարժական կրթություն, Հայացք դեպի ապագա» միջազգային գիտաժողովի նյութեր, «Մանկավարժ», Երևան, 2007թ., էջ 159-162:
6. Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես համագործակցային կարողությունների ձևավորման արդյունավետ միջոց կրտսեր դպրոցում», ԼՂՀ, Արցախի պետական համալսարան, Գիտական տեղեկագիր N3 (16), Երիտասարդ գիտնականների II գիտաժողովի նյութեր, «Արցախի պետ. համ. հրատ», Ստեփանակերտ, 2007թ., էջ 159-162:
7. Հարությունյան Գ.Ն., «Ուսուցչի հարցադրումները որպես քննադատական մտածողության զարգացման միջոց», Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ, Խաչատուր Աբովյանի ծննդյան 200 ամյակին նվիրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութեր, ՀՊՄՀ «Մանկավարժ» I պրակ, Երևան, 2010թ., էջ 90-92:
8. Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդներն ուղղված արդի մանկավարժական խնդիրների լուծմանը», «Մանկավարժություն», /Գիտամեթոդական վերլուծական ամսագիր/, N6, 2011թ., էջ 90-92:
9. Հարությունյան Գ.Ն., «Քննադատական մտածողության տեխնոլոգիան ուղղված մանկավարժական գործընթացի արդյունավետության բարձրացմանը», «Մանկավարժություն», /Գիտամեթոդական վերլուծական ամսագիր/, N6, 2012թ., էջ 28-33:
10. Հարությունյան Գ.Ն., «Տարրական դպրոցի ուսուցիչը և նրա աշխատանքը սովորողների քննադատական մտածողության զարգացման ուղղությամբ», ժողովածու Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ 90–ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. Տեսություն և պրակտիկա: Գիտաժողով /2012թ. դեկտեմբերի 14/, I պրակ, Երևան, «Մանկավարժ», 2013 թ., էջ 434-438:

**ТЕХНОЛОГИЯ КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ КАК СРЕДСТВО РАЗВИТИЯ
ПОЗНАВАТЕЛЬНЫХ УМЕНИЙ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ В СОВРЕМЕННОЙ
ШКОЛЕ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 – “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 08.05.2014 в 14:00 на заседании специализированного совета 020 ВАК “Педагогика” по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

АКТУАЛЬНОСТЬ ИССЛЕДОВАНИЯ. Являясь неотъемлемой частью общественной жизни, образование нацелено на удовлетворение общественных требований. Современная педагогическая наука ищет пути активизации роли обучающегося в учебном процессе. Современный обучающийся должен быть активным участником педагогического процесса, а не пассивным слушателем. Благодаря такому подходу ученик становится более самостоятельным и раскованным, формируются положительные мотивы учения, его познавательные интересы и умения.

Формирование и развитие познавательных умений учащихся в современной педагогике - одна из главных проблем педагогики, которая требует безотлагательного решения. Для решения названных задач современная педагогика предлагает множество педагогических технологий. Чтобы способствовать совершенствованию учебного процесса, активизировать роль учащихся, для развития и формирования их познавательных интересов в ряду многочисленных педагогических технологий свое значимое место имеет технология критического мышления.

Технология критического мышления как технология, которая обеспечивает формирование и развитие познавательных умений младших школьников, до сих пор не подвергалась целостному научно-педагогическому исследованию и анализу.

ЦЕЛЬ ИССЛЕДОВАНИЯ - выявление и обоснование возможностей применения технологии критического мышления в начальной школе как педагогической технологии, способствующей развитию познавательных умений младших школьников.

ЗАДАЧИ ИССЛЕДОВАНИЯ:

- Рассмотреть роль и необходимость развития познавательных умений учащихся начальной школы.
- Исследовать научно-теоретические, методологические основы технологии критического мышления и обосновать возможности применения этой технологии в развитии познавательных умений младших школьников.

- Обосновать технологию критического мышления как активную и адаптивную педагогическую технологию, которая способствует развитию познавательных умений младших школьников.
- Экспериментом обосновать, что технология критического мышления является современной педагогической технологией, которая эффективно применяется в современной начальной школе и способствует развитию познавательных умений младших школьников и определить эффективные педагогические условия применения.

НАУЧНАЯ НОВИЗНА ИССЛЕДОВАНИЯ:

- Технология критического мышления представлена как эффективная педагогическая технология, направленная на развитие познавательных умений младших школьников.
- Технология критического мышления представлена как активная и адаптивная педагогическая технология, применяемая в начальной школе.
- Определены педагогические условия, способствующие эффективности применения технологии критического мышления в начальной школе.
- Методы технологии критического мышления соответствуют возрастным особенностям младших школьников и сгруппированы в соответствии с общеобразовательными государственными стандартами РФ.

ТЕОРЕТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ИССЛЕДОВАНИЯ состоит в том, что в работе теоретически проанализирована история развития понятий "образование", "познание". Теоретически проанализирована технология критического мышления как активная и адаптивная педагогическая технология, которая способствует развитию познавательных умений учащихся.

Разработанные положения будут полезны для тех, кто проводит теоретические анализы педагогических технологий.

ПРАКТИЧЕСКАЯ ЗНАЧИМОСТЬ ИССЛЕДОВАНИЯ состоит в том, что методы технологии критического мышления, которые адаптированы к возрастным особенностям младших школьников, могут использоваться учителями начальной школы, способствуя формированию и развитию познавательных умений младших школьников, активизируя и повышая эффективность учебного процесса.

Результаты работы в виде курсов по выбору студентов или специальных курсов могут применяться в соответствующих педагогических образовательных программах.

НАДЕЖНОСТЬ И ДОСТОВЕРНОСТЬ РЕЗУЛЬТАТОВ ИССЛЕДОВАНИЯ обеспечивается теоретическим анализом исследовательского материала. Для этого были использованы комплексные методы, соответствующие исследовательским целям. Была проведена также математическая обработка результатов исследования.

СОДЕРЖАНИЕ ДИССЕРТАЦИИ. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений. Общий объем диссертации 160 компьютерных страниц.

HARUTUNYAN GAYANE NORIK

CRITICAL THINKING TECHNOLOGY AS A TOOL FOR THE DEVELOPMENT OF JUNIOR LEARNERS' COGNITIVE ABILITIES AT MODERN SCHOOL

Thesis for getting a candidate degree in pedagogical sciences, specialty 13.00.01 - "Theory and History of Pedagogy."

The thesis defense will be held on 08.05.2014, at 14 00, at the meeting of the Specialized Pedagogical committee 020 HAC for granting scientific degrees at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: 0010, Yerevan, Tigran Mets 17.

SUMMARY

THE RELEVANCE OF THE RESEARCH. Education as an integral part of public life at all eras was directed to satisfy requirements of society. The goal of modern pedagogical searches is to make educational process such as learners become active participants in the process, that their role change from passive listening to active listening role. Due to its students become more confident and substantive, formed to study positive incentives, cognitive interests and abilities.

In modern pedagogical process an important issue of education is also formation and development of learners' cognitive abilities. Due to the most important issues that mentioned above in modern pedagogy has been practiced many educational technologies.

Critical thinking technology which plays an important role among modern teaching technologies, greatly contributes to the improvement of the learning process, learners' activation, formation and development of cognitive abilities.

Critical thinking technology as a way for formation and development of cognitive abilities of learners', has not yet undergone to the complete scientific study and analysis.

THE AIM OF THE RESEARCH. In elementary school the reasoning and identification of using opportunities of critical thinking technology are as a pedagogical technology that develops children's cognitive abilities.

THE OBJECTIVES OF THE RESEARCH.

- To substantiate role and obligation of development of learners' cognitive abilities in primary school.
- To research critical thinking technology's scientific and methodological bases and substantiate the opportunities of the application of technology in the development of cognitive abilities.
- To consider critical thinking technology as an active, adaptive pedagogical technology, which contributes to the development of cognitive abilities of primary school.
- To confirm by an experiment that in modern elementary schools the critical thinking technology is a modern pedagogical technology that is used effectively in modern elementary schools and to define its application for effective teaching conditions.

THE SCIENTIFIC NOVELTY OF THE RESEARCH.

- Critical thinking technology was introduced as an effective pedagogical technology which is directed to the development of younger children's cognitive capacity
- Critical thinking technology introduced as an active, adaptive pedagogical technology in elementary schools.
- It is defined Education conditions which make effective use of critical thinking technology in elementary schools.
- Critical thinking technology complied with junior learners' age features and grouped according to the state standards of RA.

THE THEORETICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH. The theoretical significance of the research is that in the work analyzing the historical development of concepts "education" and "recognition". The critical thinking technology was undergone to theoretical analysis as an active and adaptive pedagogical technique that promotes the development of learners' cognitive abilities.

Elaborated provisions will perform a significant contribution to the theory of pedagogy and will be useful for performers who do theoretical analyzes of educational technology.

THE PRACTICAL SIGNIFICANCE OF THE RESEARCH. Practical significance of the research is that critical thinking technology's methods, which are adapted to learners' age features can be useful for teachers in order to increase the efficiency of the pedagogical process in elementary school.

The results can be applied in various areas of pedagogy being introduced as elective or special courses.

RELIABILITY AND VALIDITY OF THE SURVEY RESULTS is supported by the theoretical analysis of the research material. For this purpose complex methods corresponding with the research purposes were used, as well as mathematical analysis of research results.

THE STRUCTURE OF THE RESEARCH. The thesis consists of an introduction, three chapters, conclusion, list of references and application. The total volume of the theses is 160 computer sheets.

